8490

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

3К174
Ա-65

# ԱՇՆԱՆԱ - ՁՄԵՌԱՅԻՆ ԿՈՒՍՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻՆ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ—1934

DEC 2009
24 SEP 2006
ЗКП4
Ա-65

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

# ԱՇՆԱՆԱ-ՁՄԵՌԱՅԻՆ ԿՈՒՍՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻՆ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

---

**ՈՒՂՂՈՒՄ**

Գրքույկի 10-րդ էջում, վերեվից 16-րդ տողում տպված է «1924 թ. հոկտեմբերի 3-ին», պետք է կարդալ «1934 թ. հոկտեմբերի 3-ին»։

14
1934

13 FEB 2013

8490

3157-91

Հայերենը խմբագրեց՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ Ս. ԱՃԵՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 7507. Ст. 364 А-5. Тираж 1000. Заказ № 4045. Сдано в произв. 26-IX 34 г. Подписано к печати 29 IX 34 г. Кол. печ. листов $1^1/_2$. Кол. печ. знаков 60.000. Тип. „III Интернационал". Баку ул. Саратовца-Ефимова 29.



# ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. *Բարձրացնել կուսակցության տեսական մակարդակը պատշաճ բարձրության:*
2. *Ուժեղացնել գաղափարախոսական աշխատանքը կուսակցության բոլոր օղակներում:*
3. *Կուսակցության շարքերում լենինիզմի անդադար պրոպագանդ մղել:*
4. *Դաստիարակել կուսկազմակերպությանը և նրան շրջապատող անկուսակցական ակտիվին լենինյան ինտերնացիոնալիզմի ոգով:*
5. *Չկոծկել, այլ համարձակ քննադատել մի քանի ընկերների շեղումները մարքսիզմ-լենինիզմից:*
6. *Սիստեմատիկաբար մերկացնել լենինիզմին թշնամի ուղղությունների գաղափարախոսությունը և գաղափարախոսության մնացորդները:*

(Ընկ. Ստալինի զեկուցումից՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում):

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶԻՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսակցության մեջ ճիշտ ընտրանելություն կազմակերպելը դեռ գործի կեսն է: Անհրաժեշտ է ապահովել, վոր նոր ընդունված անդամը, արդեն գտնվելով կուսակցության շարքերում, դաստիարակվի ճիշտ գծով, անի, զգա իր գործունեության ամենօրյա ղեկավարություն, անխափանորեն ներգրավվի կուսակցության աշխատանքին ու կոփվի քաղաքականապես: Յերբ մենք խոսում ենք մարքսիստական – լենինյան դաստիարակության մասին, խոսում ենք վոչ միայն դպրոցական դաստիարակության, այլև բոլշևիկի գաղափարական զինման մասին: Կուսակցության անդամին պետք է դաստիարակել և՝ կուսակցական դպրոցում և, վոր գլխավորն է՝ գործնական, քաղաքական աշխատանքում: Այդ նշանակում է, վոր մենք պետք է ավելի մեծ բարձրության հասցնենք կուսակցության անդամի մարքսիստական – լենինյան դաստիարակությունը և բարելավենք կուսակցական կազմակերպությունների աշխատանքը:

Այս տարիների ընթացքում մեզ մոտ ընդարձակվեց ու ավելացավ կուսակցական դպրոցների ու խմբակների ցանցը: Յեթե 1930 թվականին կար կուսուսուցման 52 հազար դպրոց ու խմբակ, վորոնք ընդգրկում էին մի միլիոնից ավելի ունկնդիր, ապա 1933 թվի աշնանը կար 210 հազար դպրոց ու խմբակ, վորոնք ընդգրկում էին 4 միլիոն 500 հազար ունկնդիր, վորոնց թվում 2 միլիոն 200 հազար անկուսակցական: Մենք ունենք 130 հազար պրոպագանդիստ, այսինքն՝ հինգ անգամ ավելի, քան 1928 թ.: Դրանցից 10 տոկոսն ավարտել է կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը, կոմունիստական ԲՈՒՀ-երն ու մարքսիզմի դասընթացները և 25 տոկոսը՝ ստացիոնար կուսխորհդպրոցները: Պրոպագանդիստների 51 տոկոսը բանվորներ են (իսկ 1928 թվականին ընդամենը յեղել են 8 տոկոս բանվորներ):

Մենք վորոշ առաջադիմություն ենք գործել հեռակա ուսուցման ցանցի ծավալման բնագավառում: Մեզ մոտ գոյություն ունի հեռակա ուսուցման հատուկ ինստիտուտ: Սակայն ընկ. Կիրովը միանգամայն իրավացի յեր ասում, յերբ

խիստ կերպով ասում եր, թե մարքսիստական – լենինյան դաստիարակության ասպարեզում մեր կատարած աշխատանքը հետ է մնում։

Բոլշևիկը չի կարող սահմանափակվել սոսկ հավատալով ու ցնծալով, այնպես, ինչպես կրոնամոլ մարդը հավատում է յերկնային թագավորությանը։ Վոչ, բոլշևիկը, — այնպիսի մի կուսակցության անդամ է, վորի ծրագիրը, քաղաքականությունը և տակտիկան կառուցվում են մարքսիզմ–լենինիզմի խիստ գիտական հիմքերի վրա. բոլշևիկը — դա նա յե, ով հասկանում է կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը, պրոլետարիատի դիկտատուրայի անխուսափելիությունը, վորն ապահովում է սոցիալիզմի հաղթանակը։ Ուստի կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է տիրապետի մարքսիզմ – լենինիզմի հիմունքներին։

Ընկ. Կագանովիչի զեկուցումից Համկոմկուսի (բ) 17–րդ համագումարում։

---

«...Մենք ապրում ենք այնպիսի իրադրության մեջ, յերբ այն գիտությունը, վորն ուսումնասիրում է մեր դեմ կանգնած դասակարգերի դիմադրությունը յերկրի ներսում և նրա սահմաններից դուրս, այդ գիտությունը պետք է առաջին տեղը բռնի»։

(Կիրով—Համկոմկուսի (բ) 17–րդ համագումարում արտասանած ճառից)։



Այժմ, տվյալ ետապում, մեր առաջ առանձնապես պարզ կերպով յերևան է գալիս պրոլետարական դիկտատուրայի դաստիարակչական կողմը։ Ամենադժվար ետապը մնացել է յետևում։ Դասակարգային թշնամին ջախջախված է։ Նրան դեռ պետք է հարվածենք և վերջ տանք։ Բայց մեր առաջ ամբողջ ծավալով կանգնած է կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը վոչ միայն եկոնոմիկայում, այլ և մարդկանց գիտակցության մեջ։ Այդ նշանակում է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի դաստիարակչական աշխատանքը, դաստիարակչական կողմը, վորի մասին խոսեց ընկ. Ստալինը, — այդ՝ այժմ առանձնապես առաջ է քաշվում։ Կուսակցությունն այստե՛ղ ել, ինչպես և մնացած բոլոր հարցերում, պետք է լինի առաջում։

Գտնվեցին «տեսաբաններ», վորոնք գտան, վոր այն կապակցությամբ, վոր մեր առաջ հիմա անմիջապես կանգնած է անդասակարգ հասարակություն կառուցելու խնդիրը, իբր թե, մի տեսակ նվազում է և՛ կուսակցության և՛ պրոլետարիատի դիկտատուրայի դերը։ Այդ, ընկերներ, դատարկություն է։ Հենց հիմա յել, յերբ մեր առաջ կանգնած է նոր մարդկանց դաստիարակման խնդիրը, յերբ մեր առաջ կանգնած է մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարման խնդիրը, մեր կուսակցության դերը, յուրաքանչյուր կոմունիստի դերն առանձնապես ուժեղանում է. յուրաքանչյուր կոմունիստի առաջ և ամբողջ կուսակցության առաջ առանձնապես բարձրացված պահանջներ են առաջադրվում։ Մասսաների կազմակերպման և նրանց ղեկավարման գործում այժմ կոմունիստի առաջ դրվող այս բարձրացված պահանջների տեսակետից յեթե նայենք մեր դաստիարակչական աշխատանքի դրությանը, այն բանի վրա, թե ինչպե՞ս ենք պատրաստում մենք կոմունիստին՝ մասսաների ղեկավարմանը, այն բանի համար, վոր նա յուրացնի կոմունիզմի հիմունքները, մեր քաղաքականության հիմունքները, վորպեսզի նա լինի կամավոր, գիտակից դիսցիպլինայի և դեպի աշխատանքը ցուցաբերվող կոմունիստական վերաբերմունքի օրինակ, — ապա, ընկերներ, պետք է ուղղակի ասել, վոր այս բանում գործը մեզանում դրված է անբավարար։ Յես այս տեսակետից այն բնորոշությունը, վորն այստեղ յեղավ թե՛ ընկ. Ստալինի զեկուցման մեջ, թե՛ ընկ. Կագանովի-

չի փնկուցման մեջ և թե ընկ. Կիրովի ելույթում, միանգամայն արդարացի չեր: Մեր դաստիարակչական աշխատանքը դրված է անբավարար:

Իհարկե, կարելի կլիներ օրինակներ բերել այն մասին, որ մեզ մոտ վերջին ժամանակներս աճել է դպրոցների և խմբակների քանակը: Կարելի կլիներ օրինակներ բերել այն բանի վերաբերմամբ, որ մեզ մոտ անհամեմատ ավելի շատ կուսակցական գրականություն է հրատարակվում: Այս փաստ է, ժխտել այս՝ չի կարելի: Մեզ մոտ վերջին տարիների ընթացքում, ինչպես մեր գիտենք 1932–33 թ., հրատարակվել է Մարքսի և Էնգելսի աշխատությունների 7 միլիոն օրինակ, 14 միլիոն օրինակ՝ Լենինի աշխատությունների, 16 և կես միլիոն օրինակ՝ ընկ. Ստալինի աշխատությունների, դրանցից «Լենինիզմի հարցերը» — 2 միլիոն օրինակ: Միայն այս կես տարվա ընթացքում թողարկվել է «Քաղգրագիտություն» 2 և կես միլիոն օրինակ՝ կուսակցության անդամների և թեկնածուների համար: Բայց, ընկերներ, այս բոլորը մնում է ապարդյուն, երբ ինչպես հարկն է չի դրված և չի կազմակերպված ինքը՝ դաստիարակչական աշխատանքը:

Պետք է ամբողջ լրջությամբ ընդգծել, որ դաստիարակչական աշխատանքի գործում, ինչպես և բոլոր մյուս ասպարեզներում, կազմակերպման հարցերն ունեն առաջին նշանակություն: Պետք է վերջ տալ այն հայացքին, երբ պրոպագանդիստական աշխատանքը դիտվում է որպես այնպիսի աշխատանք, որտեղ մարդիկ միայն խոսակցում են և միայն հոդվածներ ու գրքեր են գրում: Այդ, ընկերներ, անմտություն է: Դրանից պետք է հրաժարվել այժմ, երբ մեր խնդիրների ամբողջ մեծության կապակցությամբ ըստ հարկին պետք է դնել նաև պրոպագանդի գործը: Կուսակցության մասսաներին ընդգրկելը, աշխատավորների մասսաներին դաստիարակչական աշխատանքով ընդգրկելը նույնպես նախ և առաջ կազմակերպչական աշխատանք է:

(Ընկ. Ստեցկու՝ Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում արտասանած ճառից):



«Կուսակցական ուսուցումն աշնանա-ձմեռային շրջանում համարելով կուսակցական – մասսայական աշխատանքի հիմնական բնագավառներից մեկը, կուսակցության Երկրային Կոմիտեն նախազգուշացնում է կենտրոնական, մարզային, քաղաքային և շրջանային կոմիտեներին, երկրի բոլոր կուսակցական կազմակերպություններին, որ կուսակցության շարքերը պատրաստված լինելու վճռական ցուցանիշներից մեկը հանդիսանում է կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների գլխովին ընդգրկումը մարքս-լենինյան ուսուցման մեջ, կիրառումն այն միջոցառումների ամբողջ գումարի, որոնք կապահովեն կուսակցական ուսուցման անխափան ընթացքն աշնանա-ձմեռային շրջանում»:

Ընկ. Բերիայի նամակից՝ գրված 1933-34 թ. աշնանա-ձմեռային կուսուսուցման ծավալման մասին:

# ԱՇՆԱՆԱ-ՁՄԵՌԱՅԻՆ ԿՈՒՍՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (բ) ԲԱԳԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ (1933 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ից)

Ադրկոմկուսի (բ) Բաքկոմի բյուրոն մատնանշում է, որ աշնանա – ձմեռային կուսուսուցման ծավալման նախապատրաստությունն ընթանում է անբավարար:

Շրջանային կուսկազմակերպությունները բոլոր անհրաժեշտ յեզրակացությունները չեն հանել Կագանովիչի նավթահանքի կուսակցական – մասսայական աշխատանքի դրության մասին հանած Համկոմկուսի (բ) Անդրերկկոմի որոշումից և Ստալինյան շրջանի շահագործման 4-րդ գրուպայում ու հորատման 2-րդ գրուպայում 17-րդ համագումարի ուսումնասիրության մասին Ադրկոմկուսի (բ) Բաքկոմի բյուրոյի որոշումից:

Կազմակերպության դաստիարակչական – քաղաքական մակարդակի բարձրացման համար մղվող պայքարը, կուսակցության շարքերը նախապատրաստելը՝ յուրաքանչյուր շրջանային և բոլորին կուսակցական կազմակերպության առաջ ամենապատասխանատու խնդիր է դնում — ընթացիկ ուսումնական տարում

100 տոկոսով ընդգրկել կուսցանցում կուսակցության անդամներին, թեկնածուներին ու համակրողներին, ապահովել նրանց համար մարքս — լենինյան խոր ուսուցման կազմակերպումը:

Գտնելով, որ աշնանային — ձմեռային ուսուցման կուսկազմակերպության բոլոր օղակների (կոմպլեկտավորում, պրոպագանդիստների ընտրություն և այլն), ուշադիր և խորացրած նախապատրաստվելն է միայն ապահովում անխափան աշխատանքը ձմեռվա շրջանում:

## ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՆ ՎՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Բագվի կազմակերպության կուսլուսավորության ցանցի վերստուգիչ թվերը:

2. Ադրկոմկուսի (բ) Բագկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժնին, կուսակցության շրջկոմներին և կուսկոմներին՝ անհապաղ անցնել նախապատրաստական աշխատանքի՝ ծավալելու համար աշնանա — ձմեռային կուսուսուցումը, ապահովելով նրա սկիզբը 1924 թ. հոկտեմբերի 3-ին:

3. 1934 թ. սեպտեմբերի 23-ին գործող կուսդպրոցների ՀՐԲ ցանցավորում կատարել, կապելով այն աշնանային — ձմեռային կուսուսուցման ցանցի կոմպլեկտավորման հետ: Կոմպլեկտավորում կատարելիս ապահովել անհատական մոտեցում կուսակցության յուրաքանչյուր անդամին, թեկնածուին և համակրողին՝ նրա հանրակրթական և քաղաքական պատրաստության, լեզվի իմացության և աշխատանքի պայմանների հաշվառման հիման վրա:

4. Առաջարկել շրջկոմներին ս. թ. սեպտեմբերի 15—25-ը շրջկոմների պլենումներ հրավիրել, որոնց քննության առնել Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարի որոշումների ուսումնասիրության հանրագումարները և աշնանա — ձմեռային կուսուսուցման խնդիրների հարցը: Սեպտեմբերի 25-ի միասնական կուսօրին ժողովներում քննության առնել կոմպլեկտավորման և աշնան — ձմեռային կուսուսուցման կազմակերպման ընթացքի հարցը:

5. Հաշվի առնելով պրոպագանդիստների ուժերի մասի պատրաստության՝ կատարված հետազոտումների միջոցով յերևան բերված թուլությունը, առաջարկել Բագկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժնին սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 25-ը տասնօրյա վերապատրաստական կուրսերի միջոցով բաց թողնել 500 պրոպագանդիստներ՝ ազատելով նրանց աշխատանքից:



Հաստատել պրոպագանդիստների կուրսերի դասախոսների կազմը.

Կուսակցության շրջկոմներին՝ անհապաղ անցնել պրոպագանդիստների կազմի վերանայմանը և ընտրությանն այն հաշվով, որ այդ բոլոր աշխատանքն ավարտված լինի ս. թ. սեպտեմբերի 25-ին: Պարտավորեցնել կուսակցության շրջկոմների քարտուղարներին անձամբ ստուգելու ոչ պակաս քան 20 պրոպագանդիստի: Մնացած պրոպագանդիստների ստուգման գործը դնել շրջկոմների քարտուղարների տեղակալների և հրահանգիչների վրա, որը հետո կհաստատվի շրջկոմի բյուրոյում:

Զատված և շրջկոմների կողմից չհաստատված պրոպագանդիստների աշխատանքն արգելել:

6. Սահմանել, որ Մարքսիզմ — Լենինիզմի ինստիտուտի, Բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի, Բարձրագույն մանկավարժական ինստիտուտի և Սոցտնտեսագիտական ինստիտուտի կոմունիստ դասատուները ու ունկնդիրները, այլև Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի ու Շահումյանի ինստիտուտի ապարատի աշխատողները մտնում են Ադրկոմկուսի (բ) Բագկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժնի տրամադրության տակ, որը նրանց կբաժանի ըստ հանքային և ֆաբրիկա — գործարանային շրջանների:

Նախազգուշացնել բոլոր պրոպագանդիստներին և սեմինարների ղեկավարներին պարապմունքների տապալման անթույլատրելիության մասին՝ իրենց հիմնական աշխատանքներով ծանրաբեռնվածության պատճառաբանությամբ:

Հանձնարարել Բագկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժնին՝ կուսուսուցման յուրաքանչյուր օղակից հետո հաղորդել Բագկոմի բյուրոյին դպրոցների և սեմինարների բոլոր այն ղեկավարների մասին, որոնք թույլ կտան պարապմունքների տապալում, — նրանց կուսակցական պատասխանատվության յենթարկելու համար՝ հրապարակելով մամուլում:

7. Սեպտեմբերի 27-ին անցկացնել պրոպագանդիստների համաքաղաքային կոնֆերանս: Կոնֆերանսում արվելիք զեկուցումը հանձնարարել ընկ. Սեֆին:

Սեպտեմբերի 27-ից մինչև 29-ը պրոպագանդիստների համար բոլոր շրջաններում անցկացնել մեթոդական պարապմունքներ (առանց աշխատանքից ազատելու):

8. Բագկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդայի բաժնին ու կուսշրջկոմներին՝ առ 1-ն հոկտեմբերի ավարտել բաց դպրոցների տիպի պրոսեմինարների կազմակերպումը, ապահովելով նրանցում առանց բացառության բոլոր պրոպա-

դասախոսների ընդգրկումը: Պրոպսեմինարների ղեկավարների կազմը մտցնել Բագկոմի բյուրոն՝ ի հաստատություն:

9. Պարտավորեցնել Կուսհրատին (ընկ. Ռասուլ – Զադե) ապահովելով առ 25-ը սեպտեմբերի Ինգուլովի ձեռնարկի առաջին յերկու գլուխների լույս ընծայումը թուրքերեն լեզվով՝ այն հաշվով, վոր հոկտեմբերի 15-ից վոչ ուշ ավարտված լինի ամբողջ ձեռնարկի հրատարակումը:

Պարտավորեցնել Կուսհրատին և Ազերքնիգային իրենց ցանցի միջոցով առ 25-ը սեպտեմբերի յեղած կուսձեռնարկները հասցնել շրջանային կուսկազմակերպություններին:

10. Համաձայնաբար մեթոդբյուրոյին՝ առաջադրությունների թողարկումը քաղցանցի համար կազմակերպել այնպես, վոր յուրաքանչյուր առաջադրություն հասնի շրջաններին վոչ ուշ, քան դրա մշակումից 10 որ առաջ: Պարտավորեցնել կուսհրատին ապահովելու առաջադրությունների ժամանակին թողարկումը յերեք լեզուներով:

Առաջադրությունների վերջնական վերանայումը դնել ընկ. Սեֆի և Ռահիմով Ջամիլի վրա:

11. Առաջարկել բոլոր թերթերի խմբագրություններին ամեն որ լուսաբանել աշնանա – ձմեռային կուսուսուցման նախապատրաստության և ծավալման ընթացքը:

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳԿՈՄԻՏԵ



# ԿՈՒՍԴՊՐՈՑԻ (ԽՄԲԱԿԻ) ԱՎԱԳՆԵՐԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

1. Յեղիր կուսուսուցման հարվածայինը, ուսումնական պլանի կատարման և դպրոցի (խմբակի) ծրագրի յուրացման համար տարվող պայքարի անձնական որինակ ցույց տուր:

2. Ամենորյա սերտ կապ պահպանիր պրոպագանդիստի հետ, թե ինչ և ինչպես պետք է անել հերթական պարապմունքի նախապատրաստության համար; կազմակերպիր այդ նախապատրաստությունը: Տեղեկություն տուր կուսկոմին՝ յուրաքանչյուր անցկացված պարապմունքի հանրագումարների մասին: Կուսկոմի, կուսկազմակերպիչների և պրոպագանդիստների հետ միասին՝ ամենորյա պայքար տար մաղումների դեմ:

3. Կենդանի կապ պահպանիր յուրաքանչյուր ունկնդրի հետ առանձին: Ուսումնասիրիր ունկնդիրների քաղաքական տրամադրությունները ու պահանջները: Պարզիր, թե կուսուսուցման դպրոցից ինչ բանում գոհ չեն նրանք: Ոգնիր պրոպագանդիստին, բավարար կերպով ուսումնասիրելու ունկնդիրներին, վոր պետք է տարբերականացվի մոտեցումը և վերացվեն դպրոցի (խմբակի) աշխատանքում յեղած թերությունները:

4. Հաջողացրու՝ դպրոցի (խմբակի) պարապմունքների տապալման կոնկրետ մեղավորներին կուսակցական խիստ պատասխանատվության գործը:

5. Պրոպագանդիստի հետ միասին կազմակերպիր դպրոցի (խմբակի) ուսումնական պլանը յուրաքանչյուր ունկնդրին հասցնելու գործը:

6. Բոլոր ունկնդիրներին ապահովիր ձեռնարկներով և այլ պիտույքներով — դրանք պահանջիր կուսկոմից, ծայրահեղ դեպքում կազմակերպիր դրանց գնումն ինքդ (պրոպագանդիստի հետ միասին):

7. Ամենորյա կապ պահիր ամենամոտիկ կուսկաբինետի կամ կոնսուլտացիոն կետի հետ, հաջողեցրու, վոր կուսկաբինետը նախապատրաստվի յուրաքանչյուր պարապմունքին (պարապմունքին վերաբերող գրականության ցուցադրում, կոնսուլտացիայի կազմակերպում, լրացուցիչ նյութի, դիտողական պիտույքների, ձեռնարկների նյութերի հավաքում և այլն):

8. Խմբակի (դպրոցի) պարապմունքի համար անհրաժեշտ նորմալ պայմաններ՝ պարապմունքների համար հարմար, մաքուր, օդափոխվող սենյակ, տաքացում, բավարար լուսավորում, դասարանական գրատախտակ, կավիճ, սրբիչ, խմելու ջուր, զգեստների կախարան, մատիտներ, տետրակներ ունկնդիրների համար, ուսումնական պիտույքներ և այլն:

9. Ժամանակին հայտնիր դպրոցի (խմբակի) յուրաքանչյուր ունկնդրին հերթական պարապմունքի մասին:

10. Կարգին հաշվառում անցկացրու հաճախումների և դպրոցի (խմբակի) ամբողջ աշխատանքի:

11. Հաջողացրու դպրոցի (խմբակի) այն միջոցառումների ժամանակին և լրիվ իրագործումը, վորոնք նախատեսված են կուսակցական, արհմիութենական, տնտեսական և մյուս կազմակերպությունների գործնական օգնություն ցույց տալու կարգով:

12. Սիստեմատիկ պայքար տար ուսումնա — արտադրական դիսցիպլինայի համար: Ուսումնական աշխատանքի հաստատուն ռեժիմ անցկացրու. ա) հաջողացրու պրոպագանդիստի և ունկնդիրների կանոնավոր ներկայությունը պարապմունքներին, 15 և ավելի րոպե ուշացող ունկնդիրներին մի՛ թողնիր պարապմունքի, բ) աշխատանքի յուրաքանչյուր 15 րոպեյից հետո, 10–15 րոպեյի ընդմիջում կազմակերպիր, ընդմիջման ժամանակ օդափոխիր սենյակը, գ) պարապմունքի ժամանակ ուսուցման սենյակում թույլ մի՛ տար ծխել, դ) մի՛ թույլ տալ ունկնդիրներին պարապմունքի ժամանակ նստել վերնազգեստով:

13. Ամենօրյա պայքար մղիր մաղման դեմ: Վոչ ուշ քան հաջորդ օրը պարապմունքից հետո, պարզիր բացակայող ունկնդիրների չներկայանալու պատճառները և կուսկոմի ու կուսկազմակերպիչի հետ միասին անհրաժեշտ միջոցներ ձեռք առ այդ պատճառները վերացնելու համար:

14. Կուսուսուցման մեջ սոցմրցության և հարվածայնության կազմակերպիչը յեղիր: Սոցմրցության արդյունքների հաշվառում, ցուցադրում սահմանիր, պարգևատրման առաջադրիր կուսուսուցման առաջավորներին:



«Խնդիրը հանգում է նրան, վորպեսզի պրոլետարիատի դասակարգային ղեկավարները լինեն՝ նրա իրական պայքարում՝ ընդդեմ իրական, իսկական թշնամիների, վորոնք կանգնած են տվյալ հասարակական-տնտեսական զարգացման իրական ճանապարհի վրա:

Այս պայմաններում տեսական և գործնական աշխատանքը ձուլվում է միասին, մի աշխատանքի մեջ, վորն այնքան ճշտությամբ բնութագրել է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վետերան Լիբկնեխտը՝ հետևյալ խոսքերով՝ ուսումնասիրել, պրոպագանդ անել, կազմակերպել:

Չի կարելի քաղաքական ղեկավար լինել առանց վերևում նըշված տեսական աշխատանքի, ինչպես և չի կարելի լինել այն՝ առանց այդ աշխատանքը գործի պահանջմունքներին ուղղելու, առանց այդ տեսության արդյունքները բանվորների մեջ պրոպագանդ անելու և օգնելու նրանց կազմակերպմանը»: (Լենին, հատ. 1-ին, հրատ. 3-րդ, էջ 192):

# ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏ,

Դու քաղաքական դաստիարակիչ ես: Քեզ կուսակցության կողմից հանձնարարված է ամենապատասխանատու գործ—կուսակցության անդամների և թեկնածուների կուսակցական լուսավորումը, անկուսակցական ակտիվի քաղաքական դաստիարակումը:

ԴՈՒ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՍ.

## 1. ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱԲԱՐ ԱՇԽԱՏԵԼ ՔՈ ՏԵՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ

Ուսումնասիրիր Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները, ակտիվ կերպով մասնակցիր պրոպկոլեկտիվում, հաճախիր պրոպագանդիստների համար կազմակերպվող զեկուցումներին և կոնսուլտացիաներին:

## 2. ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

1. Դաստիարակիր ունկնդիրներին լենինյան կուսակցականության, անհաշտության վոգով դեպի ամեն տեսակի թեքումներ կուսակցության գծից, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և դասակարգային համերաշխության վոգով:

2. Սովորեցրու ունկնդիրներին բոլոր հարցերին մոտենալու քաղաքական հեղափոխական հեռանկարի տեսակետից, միշտ և ամեն ինչում ցեխային շահերը, բանվորների առանձին խմբակների շահերը յենթարկելու պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերին: Անշեղորեն բարձրացրու ունկնդիրների գաղափարական — քաղաքական մակարդակը:

3. Ծրագրի անցումը սերտ կերպով կապիր այսորվա օրվա հեղափոխական պրակտիկայի հրատապ հարցերի հետ, մի՛ թույլ տուր ուսուցման կտրումը քաղաքականությունից: Ընդհանուր հարցերը կապակցիր ունկնդիրներին հուզող կոնկրետ հարցերի հետ, սուր հարցերի կողքովը մի անցնիր, միշտ ճշգրիտ և պարզ պատասխաններ տուր:

4. Տեսության ամենասերտ կապ անցկացրու ունկնդիրների ամենօրյա աշխատանքի պրակտիկայի հետ: Հաջողացրու կուսդպրոցի (խմբակի) ունկնդիրների ավանգարդային դերի ուժեղացումն արտադրության մեջ, նրանցից կոփիր մասսաների առաջավոր մարտիկներ և ղեկավարներ՝ կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում:

5. Ունկնդիրներին ճաշակ պատվաստիր դեպի թեորիան և ինքնուրույն աշխատանքի ունակությունները: Հաջողացրու այն, վոր նրանք լրացուցիչ, դպրոցի պարապմունքներից դուրս, կարդան Մարքսին, Էնգելսին, Լենինին, Ստալինին, [illegible] աշխատեն իրենց քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացման վրա: Կուսդպրոցը (խմբակը) ավարտողներին խորհուրդներ տուր, թե յուրաքանչյուրը նրանցից վորտեղ սովորի հետագայում:

6. Ծանոթացիր ձեռնարկության աշխատանքի և կյանքի պայմանների հետ, մասնակցիր կուսակցական — հասարակական աշխատանքում:

7. Ուսումնասիրիր քո աուդիտորիան: Զգայուն, անհատականացրած մոտեցում ունեցիր յուրաքանչյուր ունկնդրին: Հասիր պարզ ընկերական իրադրության, ունկնդիրների լիակատար վստահության, յերևան հանիր նրանց տրամադրությունները ու պահանջմունքները:



8. Անհաշտ պայքար մղիր պոչականության դեմ, վճռական հակահարված տուր անառողջ տրամադրություններին:

9. Հիշիր, վոր կուսակցական ուսուցումը—կուսակցական կադրերի դարբնոցն է, դպրոցի ունկնդիրներից աճեցրու կուսակցական ակտիվ, առանձին յերևան բեր առանձին ամենաընդունակ ընկերներին, նրանց հետ անհատական աշխատանք տար, ոգնիր նրանց կուսակցական աճին:

10. Սերտ կապ պահիր կուսակցական, տնտեսական, կոմյերիտական և արհմիութենական կազմակերպությունների հետ, ակտիվ կերպով մասնակցիր ձեռնարկության կուսակցական կյանքին: Կազմակերպիր դպրոցի (խմբակի) ոգնությունը՝ նրանց կողմից անցկացվող կարևորագույն միջոցառումներում: Հասիր նրան, վոր յուրաքանչյուր ունկնդիր իր նախաձեռնությունը, ձեռնարկությունը հանդես բերի այդ գործում:

11. Ուշի ուշով նախապատրաստվիր յուրաքանչյուր պարապմունքին՝ մշակիր անհրաժեշտ գրականությունը, կազմիր պարապմունքի պլան, նշիր հանգուցային կոնտրոլ հարցեր, նյութ ընտրիր ունկնդիրների համար, դիտողական պիտույքներ, տեղական նյութ հավաքիր ձեռնարկությունից տվյալ թեմայի համար:

12. Պարապմունքներն անց կացրու աշխույժ, հետաքրքիր: Մի՛ ցամաքեցնիր յերկար լեկցիաներով: Մի ցրվիր—հանգուցային հարցեր դիր և մի քննարկիր թեմայի բոլոր հարցերը միանգամից, այլ քննարկիր յենթաթեմաներով:

Մի մոռանար ունկնդիրների նախաձեռնությունը: Հարցերը կապելով քաղաքական և արտադրական կյանքի կոնկրետ որինակների, փաստերի հետ, ունկնդիրներին հրավիրիր աշխույժ քննարկման յենթարկելու: Պարզ ձևակերպիր պարապմունքների յեզրակացությունները: Ոգտագործիր լրացուցիչ հնարավորություններ թեմայի վերաբերյալ աշխատանքի աշխուժացման համար՝ գեղարվեստական գրականություն ընտրելը, կազմակերպիր էքսկուրսիա, կինո, հուշերի յերեկո և այլն:

13. Խոսիր կենդանի, հասարակ լեզվով, խուսափիր ունկնդիրներին անհասկանալի տերմիններից, հիմնական մտքերը լուսաբանիր կոնկրետ որինակներով:

14. Հեղափոխական տեսության ուսումնասիրությունը կապակցիր տեխնիկային տիրապետելու համար մղվող պայքարի հետ. հասիր նրան, վորպեսզի քո ունկնդիրներն առաջավորներ լինեն տեխուսուցման խմբակներում:

15. Սիստեմատիկաբար ստուգիր յուրաքանչյուր ունկնդիրի և ամբողջ խմբակի [illegible] յուրացման վորակը: Դըպ-

ՀՍՍՀ-ՍՍՌ ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3157-91

րոցի (խմբակի) աշխատանքի ամենօրյա վորակական հաշվառում կատարիր, այլև ունկնդիրների աճի հաշվառում։ Վոչ մի ունկնդիր մի փոխադրիր կուրսի ավելի բարձր ողակը, յեթե նա չի յուրացնի անցկացված ծրագիրը։

16· Կապ պահիր շրջկոմի հետ, ժամանակին տեղեկություն տուր քո կուսդպրոցի (խմբակի) աշխատանքի մասին։

## 3. ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈՒՍՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

1· Մասնակցիր դպրոցի (խմբակի) կոմպլեկտավորման նախապատրաստությանը և կոմպլեկտավորմանը։

2· Դպրոցի (խմբակի) որացուցային ուսումնական պլանը հասցրու յուրաքանչյուր ունկնդրին, հաջողացրու դրա կատարումը նախատեսված ժամկետում։

3· Մշտական կապ պահիր կուսկաբինետի հետ, ոգնիր կազմակերպելու հերթական պարապմունքի նախապատրաստությանը։

4· Ամենորյա կապ պահպանիր կուսկոմի, դպրոցի (խմբակի) ավագի, կուսկազմակերպիչների հետ։ Նրանց հետ միասին պայքար տար դպրոցի (խմբակի) կողմից ունկնդիրների մաղման դեմ։

5· Սոցիալիստական մրցում կազմակերպիր դպրոցի (խըմբակի) հետ։

6· Ամրապնդիր դպրոցի ուսումնական ռեժիմը և ունկնդիրների ուսումնական դիսցիպլինան։ Դեպի գործը դիսցիպլինավորված վերաբերմունքի անձնական օրինակ ցույց տուր՝ պարապմունքին չնախապատրաստված մի գար, մի ուշանար, քո հանցանքով կուսուսուցման վոչ մի տապալում մի թույլ տուր։



# ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԸ

## 1. ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Այս դպրոցի խնդիրն է քաղաքական գիտելիքների այն մինիմումը տալ, վորն անհրաժեշտ է կուսակցության յուրաքանչյուր համակրողին, թեկնածվին և կուսակցության մեջ անդամ մտնողին։ Պարապմունքներն անց են կացվում տասնօրյակում մի անգամ։ Դպրոցի աշխատանքի ժամկետն է ութ ամիս։

Թեկնածուական դպրոցները կազմակերպվում են ձեռնարկությունների կուսկոմների և կուսկոմյերիտական խմբակների կից կուսակցության թեկնածուների, համակրողների և անկուսակցական ակտիվի համար։

Քաղաքի թեկնածուական դպրոցներն աշխատում են Ինգուլովի կամ Վոլինի քաղգրագիտության ձեռնարկով։ Ձեռնարկը լուսաբանում է կուսակցության ծրագրի, կանոնադրության և ժամանակակից քաղաքականության հիմնական հարցերը։ Այս ձեռնարկով մշակվում են հետևյալ թեմաները․

1· Յերկու աշխարհ յերկու սիստեմ—յերկու պարապմունք։

2· Մեր վերջնական նպատակը կոմունիզմն է—մեկ պարապմունք։

36 Բոլշևիկների Համամիութենական Կոմունիստական Կուսակցություն—մեկ պարապմունք։

4· Համկոմկուսի (բ) պատմության գլխավոր էտապները—յերեք պարապմունք։

5· Կուսակցությունը ԽՍՀՄ-ի ինդուստրացման համար մղվող պայքարում — մեկ պարապմունք։

6· Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների կազմակերպչա - տնտեսական ամրապնդումը—մեկ պարապմունք։

7· Պրոլետարական դիկտատուրայի ժամանակակից խնդիրները—յերեք պարապմունք։

8· Ազգային հարց—յերեք պարապմունք։

9· Կոմինտերնը՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության կուսակցություն—մեկ պարապմունք։

10· Մարքս—Էնգելս—Լենին—Ստալին—մեկ պարապմունք։

Այն խմբակները, վորոնք պարապվում են Համաձայն Ինգուլովի կրճատված ձեռնարկի, 1934 թ. հրատարակության, մշակում են հետևյալ թեմաները.—

1. Ինչպես են ապրել ու պայքարել բանվորներն ու գյուղացիները մինչև հեղափոխությունը—մեկ պարապմունք:

2. Խորհրդային Միությունը և կապիտալիստական աշխարհը—յերկու պարապմունք:

3. Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան և ինչպես է բանվոր դասակարգը կենսագործում այդ—յերեք պարապմունք:

4. Մենք պայքարում ենք կոմունիզմի համար—մեկ պարապմունք:

5. Պայքարը սոցիալիզմի համար առաջին հնգամյակում—մեկ պարապմունք:

6. Յերկրորդ հնգամյակը—անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման հնգամյակ—յերկու պարապմունք:

7. Ինչպես է կառուցված Համկոմկուսը (բ)—յերեք պարապմունք:

8. Լենին ու Ստալին—յերկու պարապմունք:

9. Կոմունիստական Ինտերնացիոնալ—յերկու պարապմունք:

## 2. ՏԱՐՐԱԿԱՆ ԿՈՒՍԴՊՐՈՑ

Աշխատանքի ժամկետն է ութ ամիս: Պարապմունքներն անց է կացվում տասնօրյակում մեկ անգամ: Լենինիզմի ուսումնասիրության տարրական դպրոցը թեկնածուական դպրոցին հաջորդող աստիճանն է հանդիսանում: Նրա խնդիրն է՝ բարձրացնել կուսակցության անդամների և թեկնածուների քաղաքական գիտելիքների մինիմումը, ընկ. Ստալինի «Լենինիզմի հարցերը» գրքով լենինիզմի հարցերն ուսումնասիրելու միջոցով: Տարրական դպրոցները կազմակերպվում են նույն այնտեղ, վորտեղ և թեկնածուական դպրոցները: Տարրական կուսդպրոցներում մշակվում են հետևյալ թեմաները:

1. Լենինիզմը—իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների եպոխայի մարքսիզմն է—մեկ պարապմունք:

2. Դասակարգերը և դասակարգային պայքարը—յերկու պարապմունք:

3. Կոմունիստական կուսակցությունը—նոր տիպի կուսակցություն է—յերկու պարապմունք:

4. Պրոլետարական հեղափոխության տեսությունը—յերկու պարապմունք:



5. Պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով դեպի կոմունիզմը—յերկու պարապմունք:

6. Գյուղացիական հարց—յերկու պարապմունք:

7. Ազգային հարց—յերեք պարապմունք:

8. Ստրատեգիա և տակտիկա—յերկու պարապմունք:

9. Լենինիզմի վոճն աշխատանքում—մեկ պարապմունք:

## 3. ՀԱՄ. ԿԿ (Բ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ

Աշխատանքի ժամկետն է ութ ամիս: Պարապմունքներն անց են կացվում տասնօրյակում մեկ անգամ: ՀամԿԿ (բ) պատմության ուսումնասիրության խմբակները կազմակերպվում են կուսակցության այն անդամների և թեկնածուների համար, վորոնք ունեն տարրական կուսդպրոցի ծավալից վոչ ցածր քաղաքական պատրաստություն: Խմբակների խնդիրն է խորապես ուսումնասիրել կուսակցության պատմությունը և նրա քաղաքականությունը դասակարգային պայքարի ու սոցիալիստական շինարարության զանազան ետապներում: ՀամԿԿ (բ) պատմությունն ուսումնասիրող խմբակները աշխատում են Համաձայն Պոպովի, Յարոսլավսկու կամ Կնորինի դասագրքի:

Մշակվում են հետևյալ թեմաները.

1. Բոլշևիզմի պատմական նախապատրաստումը:

2. Բոլշևիզմի առաջացումն ու ձևակերպվելը:

3. Կուսակցությունը 1905–07 թ. թ. հեղափոխության տարիներին:

4. Կուսակցությունը ռեակցիայի և նոր վերելքի տարիներին:

5. Կուսակցությունը իմպերիալիստական պատերազմի տարիներին:

6. Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման տարիներին (1917 թ. Փետրվարից—Հոկտեմբերի ժամանակաշրջանում):

7. Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի համար մղված պայքարում:

8. Կուսակցությունը քաղաքացիական պատերազմի և ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանում:

9. Կուսակցությունը ՆԵՊ-ին անցնելու ժամանակ և վերականգնման ժամանակաշրջանում:

10. Կուսակցությունը սոցիալիստական շինարարության վերակառուցման ժամանակաշրջանում:

11. Կուսակցությունը՝ ամբողջ ճակատով սոցիալիստական հարձակման ժամանակաշրջանում:

12. Կուսակցությունը՝ ԽՍՀՄ-ի սոցիալիզմի ժամանակաշրջանը մտնելուց և պայքարը սոցիալիստական հասարակության կառուցման համար:

⁂

Ծանոթություն.— Ներկա նյութը կազմված է «Հանուն մարքսիստական-լենինյան ուսուցման բոլշևիկյան կազմակերպման» նյութերի ժողովածուի հիման վրա, հրատարակություն Համկոմկուսի (բ) Անդրերկոմի կուլտպրոպի 1933 թվին:

Гос. Публ. Библ. отдел
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընկ. Ստալինի Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում տված զեկուցումից:
2. Ընկ. Կագանովիչի Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում տված զեկուցումից:
3. Ընկ. Մանույլսկու Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում արտասանած ճառից:
4. Աշնանա - ձմեռային կուսուսուցման նախապատրաստության և ծավալման մասին:
(Անդրկոմկուսի (բ) Բաքկոմի բյուրոյի 1934 թ. սեպտեմբերի 8-ի որոշումը):
5. Կուսդպրոցի (խմբակի) ավագի հուշատետրը:
6. Պրոպագանդիստի հուշատետրը:
7. Կուսլուսավորության ցանց:

ՀՀ Ազգային գրադարան
NL0182531

В помощь организатору и пропагандисту осенне-зимней партучебы.

Партиздат Баку—1934 г.